

# ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՄԻԹԱԿԱՆ

## ԻՖԻԳԵՆԻԱՆ ՏԱՒՐԻՍՈՒՄ

ՀՈՐՌՈՐԴԻ ԳՈՐԾՈՂ ԱԽԹԻԻՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ԻՖԻԳԵՆԻԱՆ

Թէ երկնային անմահներ  
 Մահկանացու զաւակին  
 Խիստ յուզմունքներ են նիւթում,  
 Եւ պատրաստում թշուառին,  
 Խոր սրտաշարժ անցումներ,  
 Հրճուանքներից դէպի վիշտ  
 Եւ վշտերից դէպ հրճուանք՝  
 Ապա նոքա այդ մարդուն  
 Քաղաքի մօտ տեղերում  
 Կամ հեռաւոր ափերում  
 Խոր նեղութեան օրերին  
 Օգնող ընկեր են տալիս,  
 Կարիքի մէջ թէ թիկունք:  
 Օրհնեցէք, երկինք, մեր քաջ Պիլադին,  
 Նրա ձեռնարկած նաև ամեն բան.  
 Մարտի մէջ բազուկ է նա պատանու,  
 Ժողովում փայլող աչք է ծերունու:  
 Խաղաղ է հոգին: Սուրբ ու անսպառ  
 Բարիքն է պահում նա լուռ հանգստեան  
 Եւ մերժուածներին իւր սրտի խորքից  
 Տալիս է նա իւր բազուկն ու բերան:  
 Ուժով կորզեց ինձ եղբօրս զրկից,  
 Որին հիացած բռնել էի պինդ  
 Ու որի տեսքից չէի կշտանում:  
 Չէի բաց թողնում սիրասուն եղբօրս  
 Իմ բազուկներէս. ես կարծես բնաւ

ԶԵՒ ԷԼ ՊՊՈՒՄ ՄԵՂ ՉԱՄ ՄԾՏԱԼՈՒՄ  
 ՎՄՏԱՆԳՆ ԱՀԱԼՈՐ:  
 Ա.ՅԺՄ ՉՄՏԱՎՈՎ ԳՆՈՒՄ ԵՆ ՆՈՔԱ  
 ԳԼՈՒԽ ՀԱՆԵԼՈւ ԻՐԱՆց ՆԱՊԱՄՈՒԿ,  
 ԳՆՈՒՄ ԵՆ ՊԵԿ ՃՈՎ, ՈՐՄԵՂ ՄԻ ԽՈՐՉՈՒՄ  
 Պատրաստ մարդկանցով ՆԱԼՆ Է Սպասում  
 ՈՐՈՇ ՆՉԱՆԻՆ: ՆՈՔԱ ԻՄ ԲԵՐՆՈՒՄ  
 ԽԵԼՕՔ ԽՈՎՔ ՊՐԻՆ, ԽՆՁ ՍՈՎՈՐԵցրին  
 ԹԷ ԵՍ ԱՐՔԱՅԻՆ ԻՆՀ ՊԱՄԱՍԽԱՆԵՄ;  
 ԵՐԲ ՆԱ ՄԱՐԴ ՊՐԿԻ Ու ԽԻՍՏ ՊԱՀԱՆՁԻ  
 ԶՈՀԻ ԱՆՋԱՊԱՂ, ՎՈՒԹԿՈՄ ԿԱՄԱՐՈՒՄ:  
 ԱՇ, ԼԱԼ ԵՄ ՄԵԽԱՆՈՒՄ, ՈՐ ԵՍ ՍՄԻՎՈՒԱՃ  
 ԹՐՈՅԼ ԵՄ ՄԵԽԱՆ ԻՆՁ ԵՐԵԽԱՅԻ ՊԵՍ  
 Ուրիշի ԽՈՎՔՈՎ ՆՄՈՒԵԼ Ու ԿԱՆԳՆԵԼ:  
 ԵՍ ՍՈՎՈՐԱՃ ՀԵՄ ՄԵԿԻՆ ԽԱԲԵԼՈՒ,  
 ՈՉ ԷԼ ՆԵՆԳՈՒԹԵԱՄԲ ՄԻ ԲԱՆ ՉՈՀԵԼՈՒ:  
 ՎԱՐ ԽԱԲԵՌՈՒԹԵԱՆ. ԻՆՉՈՒ ՈՐ և է  
 ՃՇՄԱՐԻՄ ՄԻ ԽՈՎՔ, ՆԱ ՃԻ ԱՊԱՏՈՒՄ  
 ՄԵՐ ԿՈՒՐՃՔԸ ՎՀՄՈՒ. ՆԱ ՃԻ ՍՓՈՓՈՒՄ  
 ՄԵՐ ՍԻՐՄՆ Ու ՀՈԳԻՆ: ՄԱՐՍԱՎԻ Է ԱՊԴՈՒՄ  
 Ա.ՅՆ ՄԱՀԿԱՆԱԳՈՒԻՆ, ՈՐ ՃԱՃՈՒԿ ԿԵՐՊՈՎ  
 ԴԻԱԼԵՐ Է ՆԻՒԹՈՒՄ: Եւ ՈՐՊԵՍ ՄԻ ՆԵՄ  
 Ուժեղ արձակուաճ, կապարի ուժով  
 ՆԱ յԵՄ Է ՊԱռՆՈՒՄ Ու ԱՐՁԱԿՈՂԻ  
 ԿՐՃՔԻՆ Է ՊԻՎՀՈՒՄ  
 ՀՈԳՈ ՀՈԳՍԻ ՎԼՈՎ ՃՆՉՈՒՄ ԵՆ ՀՈԳԻՍ.  
 ԿՐԿԻՆ ՀԱՐ ՈԳԻՔ ԲՌՆԵԼ ԵՆ ՊՈւցէ  
 Ա.ՅՆ ԱՆՍՈՒՐԲ ԱՓՈՒՄ ՍԻՐԵԼԻ Եղբօրս.  
 Եւ ՊՈւցէ արդէն յայտնուել են ՆՈՔԱ.  
 ԼՍՈՒՄ ԵՄ ԿԱՐՃԵՍ ԱՅՍ ԿՈՂԹՆ ԵՆ ՊԱԼԻՍ  
 ԶԻՆԱՎԱՌ ՄԱՐԴԻԿ: ԱՇ—ԱՐՔԱՅԻ ԿՈՂՄԻց  
 ՊԱՄՊԱՄ Է ՊԱԼԻՍ ՉՄՏԱՎ ՔԱՅԼԵՐՈՎ,  
 ԲԱԲԱԽՈՒՄ Է ՍԻՐՄԱ, ՀՈԳԻՍ ԱՊԴՈՐԸՈՒՄ,  
 ԵՐԲ ՄԵԽԱՆՈՒՄ ԵՄ ՊԵԿՄՔՆ ԱՅՆ ՄԱՐԴՈՒ, ՈՐԻՆ  
 ԿԵՂՃ Ու ՍՈՒՄ ԽՈՎՔՈՎ ԱԼԻՄ ՊԻՄԱԼՈՐԵՄԻ

ԵՐԿՐՈՌԴ ՏԵՍԱՐԱՆ

ԻՖԻԳԵՆԻԱ, ԱՐՔԱՆ

Արքաս. Շտապիր կոհել, դու, ով քրմուհին  
Ամբոխն ու արքան քեզ են սպասում:  
Իֆիգենիա. Կը հետեւէի պարտքիս ու խօսքիդ,  
Եթէ որ միայն մի անակընկալ  
Խոչընդուռ չգար խափան լինելու:  
Արքաս. Ի՞նչն է խոչ եղել արքայի խօսքին:  
Իֆիգենիա. Մի անյօյս դիպուած, որին մենք տէր չենք:  
Արքաս. Ուրեմն ասա ինձ, որ իսկոյն զնամ  
Յայտնեմ արքային, զի՞նա երկուսի  
Մահն արդէն վաղուց վճռել է անդարձ:  
Իֆիգենիա. Երկինքը սակայն դեռ չէ վճռել:  
Աւագն այդ մարդկանց ցեղակցի արեան  
Մեղք ունի վրան, ուստի չար ոզիք  
Հալածում են նրա հետքը անընդհատ.  
Նոյն իսկ տաճարի ներսումն. էլ նոքա  
Բռնուած են չարով, և այս սրբազան  
Վայրերը մաքուր պղծուած են արդէն:  
Էշտատապում եմ արդ իմ նաժիշտներով  
Մօտակայ ծովափ, թարմ ալիքներով  
Ցայելու պատկերն անմահ դիցուհու,  
Նորից գաղտնալի ձօնմունք անելու.  
Ուստի թող ոչ ոք չհամարձակուի  
Մեր լուռ ընթացքին արգելք լինելու:  
Արքաս. Շուտով կը յայտնեմ ես մեր արքային  
Այդ նոր հանգամանք. մինչև որ արքան  
Հրաման չտայ, դու գործ չսկսես:  
Իֆիգենիա. Դա լոկ քրմուհուն է վերապահուած:  
Արքաս. Արքան էլ անշուշտ պիտի դիտենայ  
Խիստ արտասովոր այդպիսի մի դէպք:  
Իֆիգենիա. Խորհուրդը նրա կամ թէ հրաման  
Ուրոշումիս մէջ ոչինչ չեն փոխիլ:  
Արքաս. Շատ անգամ մեծին հարցնում են միայն  
Լոկ ձեւի համար:

Իֆիզենիա. Մի ստիպիր ինձ, ինչ որ պիտ մերժեմ:

Արքաս. Մի մերժիր, ինչ որ օգուտէ ու լաւ:

Իֆիզենիա. Կը համաձայնուեմ, եթէ շտապես:

Արքաս. Իսկոյն այդ լուրով բանակ կը վազեմ:

Շուտ էլ պատասխան կը բերեմ խօսքիդ:

Այս, երանի թէ կարողանայի:

Արքային քեզնից մի լուր էլ աանել,

Որ արդ մեզ յուզող բոլոր հարցերին:

Վախճան կը դնէր: Դու չլսեցիր

Քեզ տուած խրատն իմ հաւատարիմ:

Իֆիզենիա. Ինչ կարող էի—արել եմ սիրով:

Արքաս. Միտքը փոխելու դեռ կայ ժամանակ:

Իֆիզենիա. Այդ քայլն ամեն ժամ մեզնից չէ կախուած:

Արքաս. Անհնար ես հաշւում դու այնպիսի բան,

Ինչ որ քեզանից լոկ ջանք է ուզում:

Իֆիզենիա. Հեշտ բան ես կարծում որովհետեւ դու

Այդ ես ցանկանում:

Արքաս. Լուռ խաղաղ կերպով ուզում ես ուրեմն:

Առաջ խոյանալ ընդդէմ ամենի:

Իֆիզենիա. Ես աստուածների ձեռքն եմ յանձնել դա:

Արքաս. Աստուածներն յանախ փրկում են մարդկանց

Մարդկային կերպով:

Իֆիզենիա. Ամեն բան նոցա մատից է կախուած:

Արքաս. Ասում եմ հաստատ, քեզնից է կախուած:

Արքայի յուզուած զայրոյթն է միայն,

Որ եկտորներին դառն անտանելի:

Մահ է պատրաստում: Վաղուց է արդէն

Որ դաժան զոհեր էլ չեն պահանջում

Զօրքերն արքայի: Շատ շատերն անշուշտ,

Որ դաժան բախտի անգութ հարուածով

Եկել են ընկել այս ափերն օտար,

Հրճուել են սրտանց՝ հեռու ափերում

Տեսնելով ժպտող մի զէմք մարդկային:

Օ՛, մեզ մի մերժիր, ինչ որ անկասկած

Քեզնից է կախուած: Ակսածդ արդէն

Հեշտ կը վերջացնես. զի այլ ոչ մի տեղ  
 Մարդկային դէմքով երկնքից իջած  
 Ողորմութիւնն իւր ուժերը բոլոր  
 Լայն չի ծաւալում, այն տեղերից զատ,  
 Ուր արութեամբ լի, ուժեղ, կենսունակ  
 Վայրի ու պղտոր մի նոր ժողովուրդ  
 Չար պատահարի թողնուած, մատնուած  
 Կրում է սաստիկ դժուարին բեռներ։  
**Իֆիզենիա.** Մի յուզիր հոգիս, որ կամքովդ արդէն  
 Զես կարող շարժել։  
**Արքաս.** Պէտք չէ զլանալ ոչ բարի խօսքի  
 Սիրով կը կնութիւն, ոչ ջանք աշխատանք,  
 Քանի դեռ ուշ չէ։  
**Իֆիզենիա.** Դրանով դու քեզ հոգս ես պատճառում՝  
 իսկ ինձ՝ վիշտ ու ցաւ. երկուսն էլ իզուր,  
 Ուստի լաւ կանես, որ թողնես դու ինձ։  
**Արքաս.** Այդ վշտերն են, որ սատար եմ կանչում.  
 Մեր նեղ օրերին ընկեր են դոքա,  
 Ու մեզ միշտ բարի խորհուրդ են տալիս։  
**Իֆիզենիա.** Տիրում են նոքա ուժով իմ հոգուն,  
 Խորշումս սակայն չեն կարող ջնջել։  
**Արքաս.** Միթէ բարեսիրտ հոգին կը խորշի՝  
 Ազնուասիրտ մարդու բարութեան առաջ։  
**Իֆիզենիա.** Այս, եթէ որ ազնուասիրտ այդ մարդն  
 ինձ տիրել ցանկայ իմ երախտեաց տեղ,  
 Մի բան, որ նորան վայել չէ երբէք։  
**Արքաս.** Ով հակում չունի, նա արդարացման  
 խօսքերի պակաս չի զգայ երբէք։  
**Այստեղ պատահածն արքային կասեմ։**  
 Օ՛, երանի թէ կը կնէիր մտքումդ,  
 Ինչքա՞ն բարեմիտ, անկեղծ է վարուել  
 Քո վերաբերմամբ բարեսիրտ արքան  
 Այստեղ գալուտեան օրէդ մինչ այսօր։

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱԿԻ

Իմիգենիա (մենակ).

Այս մարդու խօսքերն՝ ըզդում եմ՝ հոգիս  
Ալեկոծեցին տարաժամ կերպով:  
Սարսափը կարծես տիրում է սրտիս.  
Ինչպէս որ յորձանքն ուժդին զարկերով  
Ճայռում է ժայռերն արագ հոսանքով,  
Որ վեր են ցցւում աւազոտ ափում;  
Նոյնկերպ հրճուանքի մի զօրեղ հոսանք  
Եկաւ ու լցուեց ողջ սիրտս ու հոգիս:  
Ես անկարելին պահում էի պինդ  
Չեռքերիս միջին: Կարծես թէ մի ամպ  
Մեղմ յուշիկ կերպով իջել էր վրաս  
Ու խոր նիրհի մէջ սուզել ու թաղել,  
Որ տալիս էր ինձ բարի դիցուհին  
Իւր զօրեղ բազկով ինձ ազատելիս:  
Հոգիս զօրութեամբ կպել էր եղբօրս,  
Նրա ընկերոջ խօսքն էի լսում.  
Նոցա փրկելու յոյսն էր ինձ միայն  
Հակառակ գործի մղում անընդհատ:  
Եւ ինչպէս նաւորդն ամայի կղզում  
Սուր ժայռ խութերից երես է դարձնում,  
Այդպէս էլ կարծես հեռու էր ինձնից  
Տաւրիսն ամպամած: Բայց հաւատարիմ  
Խօսքերն այդ մարդու կրկին յիշեցրին,  
Որ այս ափերում մարդիկ եմ թողնում:  
Այս, կրկնապատիկ ատելի է ինձ  
Ուրիշին խարել: Օ, հանգիստ մնա՛,  
Իմ վշտոտ հոգի: Ոկուցիր դարձեալ  
Յուզուել կասկածով ու երկրայութեամբ:  
Քո մենակութեան հողը հաստատուն  
Դու պիտի թողնես: Նորից քեղ կառնեն  
Ծովի ալիքներն իրանց երերուն  
Ծփանքի վրայ: Այդպէս վեհերոտ  
Ու տիսուր կերպով լու չես ճանաչի  
Դու ոչ այս աշխարհն և ոչ ինքը քեղ:

## ԶՈՐԾՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Իջիգենիա, Պիլադ.

Պիլադ. Ո՞ւր գտնեմ նորանո որ մեր փրկութեան  
Ուրախ լուրը տամ արագ խօսքերով:  
Իջիգենիա. Այստեղ եմ ահա. լի յոյս հոգսերով  
Եւ սպասելով միմիթարութեան,  
Որ բերում ես ինձ:

Պիլադ. Առողջ է եղբայրդ. ուրախ խօսքերով  
Մենք ոտք կոխեցինք աւազոտ անսուրը  
Այն ափը ժայռոտ. անտառակն արդէն  
Մեր յետե մնաց – էլ չէինք տեսնում:  
Երիտասարդի բորբոք կրակով  
Վառւում է նրա զանգրահեր զլուխն  
Աւելի սիրուն, աւելի շքեղ:  
Աչքը բոլորակ այրւում է յոյսով,  
Եւ նրա հոգին՝ այժմ ազատ հոգին  
Քեզ՝ իր ազատչին ու ինձ փրկելու  
Ուրախ հրճուանքին անձնատուր է ողջ:

Իջիգենիա. Օրհնուած լինիս միշտ. և թող քո բարի  
Ճշմարիտ բերնէդ չլսուի երբէք  
Վշտի նեղութեան բողոքող ձայներ:

Պիլադ. Էլի բան ունեմ ես քեզ ասելու.  
Զի իշխանն ինչպէս թիկնապահներով  
Այնպէս է գալիս բախտը գէպի մեզ:  
Մենք դտանք նաև ուղեկից մարդիկ.  
Պահել են նոքա նաւը մեղ տանող  
Ժայռոտ մի խորշում և տխուր նստած  
Մեզ են սպասում: Ցեսան քո լիրորդ  
Ու իսկոյն ամենքն հրճուանքով լցուան.  
Ու թախանձանքով խնդրում էին մեզ  
Մեկնումի բոպէն արագացնել:  
Յաղթ բազուկներով տենչում են նոքա  
Շուտ թիավարել: Եւ մինչեւ անդամ  
Մեղմիկ շշիւնով երկրից բարձացաւ

Յաջողակ մի հողմ մեզ նպաստաւոր և այլ  
Ուստի շուտ արա՛ շտապիր, տար մեզ,  
Թոյլ տուր, որ մտնենք սուրբ տաճարի մէջ,  
Թո՛ղ որ շօշափենք խոր պատկառանքով  
Մեր կէտ նպատակ: Ինքս մեն մենակ  
Կարող եմ կրել վարժուած ուսերիս  
Դիցուհու պատկերն: Օ՛, ինչպէս ուժգին  
Տենչում եմ կրել այդ բեռն ըղձալի:

(Վերջին խօսքերն ասելիս տաճար է դիմում, առանց  
Նկատելու, որ իջիգենիան նրան չի հետեւում: Վերջապէս  
շուռ է զալիս):

Կանգնած ես այդտեղ, չես գալիս ինձ հետ...  
Ո՞չ, աս'ս, ասա՛, ինչու ես լոել:  
Յուզուած ես թւում: միթէ մեր բախտին  
Խափան են լինում նոր խութ ու խոչեր:  
Ասա՛, միթէ դու արքային արդէն  
Խմաց ես արել խօսքերն այն խելօք,  
Որ մենք իրար մէջ խօսեցինք այստեղ:

Իջիգենիա. Այ՛ն, աղնիւ մարդ. և քո լուակեաց  
Հայեացքդ արդէն սաստ է ինձ համար:  
Արքայի կողմից սուրհանդակն եկաւ,  
Ու ես քո տուած խօսքի համաձայն  
Հետը խօսեցի: Զարմացաւ կարծես,  
Ու յամառաբար ցանկացաւ, որ նախ  
Արքան իմանայ այդ տարօրինակ  
Հանդէսի մասին և իւր կամքը տայ:  
Եւ արդ ես նրա դարձին եմ մնում:

Պիլադ. Վայ մեզ խեղճերիս, դարձեալ պատահարն  
Սպառնում է մեզ խափան լինելու:  
Ինչու քրմական քո իրաւունքներդ  
Ի գործ չես զրել:

Իջիգենիա. Երբէք ես դրանց  
Այդպիսի բանի ի գործ չեմ զրել:  
Պիլադ. Զէ որ այդպիսով ով մաքուր հոգի,  
Կորցնում ես թէ քեզ, և թէ բոլորիս:

ինչու առաջուց չմտածեցի  
 Այդպիսի գիպուած, որ քեզ նախապէս  
 Պատասխանելու յարմար խրատ տայի:  
 Իֆիզենիա. Ինձ մեղադրիր, մեղքը իմն է լոկ.  
 Զգում եմ ես այդ. բայց չեի կարող  
 Այլ կերպ պատահել ես նոյն այն մարդուն,  
 Որ խելօք կերպով ու լրջմտութեամբ  
 Տենչում էր ինձնից լոել բացարձակ,  
 Ինչ որ սիրոս արդէն չեր կարող չասել:  
 Պիլադ. Մեր բախտի գլխին թուխպեր են դիզւում  
 Թող որ չուշանանք, կամ արագ կերպով  
 Ու անմտաբար գործը չմատնենք:  
 Սպասիր հանգիստ դու սուրհանդակի  
 Բերած համբաւին, և այն ժամանակ  
 Հաստատուն մնա նախկին որոշմանդ,  
 Ինչ էլ որ նա քեզ ասելու լինի:  
 Չի հանդիսաւոր այդպիսի ձօնմունք  
 Կատարելն անշուշտ քեզնից է կախուած  
 Եւ ոչ արքայից:  
 Եւ թէ նա ցանկայ տեսնել այդ եկոր  
 Զոյդ օտարներից խելացնորութեամբ  
 Սաստիկ բռնուածին, դու կասես նրան,  
 Որ երկուսով էլ տաճարի ներսում  
 Ապահով կերպով պահուած են արդէն:  
 Այդ եղանակով դու միջոց տուր մեղ  
 Աճապարանօք անարժան, վայրի  
 Այդ ժողովրդից խլենք սրբազան  
 Գանձը ցանկալի ու անդարձ փախչենք,  
 Ահա Ապոլլոն իւր բարեգուշակ  
 Նշանակներով կատար է ածում  
 Տուած իւր խոստում. բայց դեռ մեզ տուած  
 Պայմանը համեստ մենք չենք կատարել:  
 Ազատ է Օրեստն ու առողջացած:  
 Օ՛, հողմ յաջողակ, աղատուածի հետ  
 Մեղ էլ տար, վանիր այն ժայռոտ կղզին

Ուր Աստուած միայն օթևան ունի:  
Ապա մեզ ուղղիր դէպ դժբախտ Միկէն,  
Որ կենդանանայ, որ հայրենի տան  
Հանգած մոխիրից նորից կեանք առնեն  
Նախնի աստուածներն ու նոցա տներն  
Փայլուն կրակով նորից պսպղան:  
Ամենից առաջ ոսկի բուրվառով  
Խունկ պիտի ծխես դու այն տեղերում  
Ու այն շէմքից ներս քեզ հետ դու պիտի  
Կեանք ու փրկութիւն տանես բոլորին,  
Վերացնես անէծքն ու քոյիններին  
Նորող զարդարես կեանքի թարմ ծաղկով  
Աւելի սիրուն, շքեղ փառաւոր:  
Իֆիզենիա. Քեզ ականջ տալիս, ով դու թանկագին?  
Խօսքերիդ փայլից հոգիս՝ զարնըուած՝  
Դիմում է քաղցրիկ մխիթարութեան,  
Ինչպէս ծաղիկներն՝ արևին դիմում:  
Որքան քաղցր են մեզ ներկայ ընկերոջ  
Խօսքերն հմտալից և որքան թշուառ  
Դրա երկնային կեանքը տարաբախտ:  
Ընկերոջ կրծքում միտքն ու որոշմունք  
Պահուած են խնամքով ու հասունանում  
Դանգաղ ուղիով, և սիրող սրտի  
Ներկայ լինելովս բացւում են հեշտիւ  
Փթթում, զարդանում:  
Պիլադ. Դէ՛չ, մնաս բարով, ես ընկերներիս  
Վրդովմունքն ուժգին գնամ մեղմացնեմ,  
Որոնք տենչալի մեզ են սպասում:  
Ապա հապճեպով ես յետ կը դառնամ  
Եւ թուփերի մէջ դարանի մտած  
Ես լուռ կը պասեմ տալիք նշանիդ:  
Ի՞նչ ես մտածում. ազառ ճակատիդ  
Խաղաղ տխրութեան խոհերը կարծես  
Նորից են գալիս դիզւում շարեշար:  
Իֆիզենիա. Ներիր, ինչպէս որ ամպերը ճերմակ

Աաշում են անցնում արեի մօտից.  
 Թեթև երկիւղներն ու մեղմ տագնապներն  
 Անցնում են այնպէս հոգուս առջեռվ։  
 Պիլադ. Օ՛, մի վախենար. դաւաճան կերպով  
     Չեռք է կառկառում վախը վտանգին,  
     Դոքա երկուսով ընկեր են իրար։  
 Իֆիզենիա. Ազնիւ եմ կռչում սրտիս այս տագնապն,  
     Որ ուշիմ կերպով յիշեցնում է ինձ  
     Զիսաբել դաւով ու չկողոպտել  
     Ինձ երկրորդ հօր տեղ եղած արքային։  
 Պիլադ. Դու խոյս ես տալիս քո իսկ հարազատ  
     Եղբօր մոլթողից։  
 Իֆիզենիա. Նա նոյնն է, որ ինձ բարիք է արել։  
 Պիլադ. Ապերախտութիւն չէ բոլորովին,  
     Ինչ որ նեղութիւնն է ստիպում մեզ։  
 Իֆիզենիա. Ապերախտութիւնն իսպառ չի փոխւում  
     Նրան արդարացնող կարիքն է սակայն։  
 Պիլադ. Այդպէս են ասում նաև աստուածներն  
     Ու մահկանացուք։  
 Իֆիզենիա. Սեփական հողիս դժգոհ է սակայն։  
 Պիլադ. Քո այդ խիստ պահանջն զաղտ հպարտութեան  
     Նշան է անշուշտ։  
 Իֆիզենիա. Չեմ հետազօտում զգում եմ միայն։  
 Պիլադ. Սակայն թէ արդար զգում ես դու քեզ,  
     Անշուշտ այդ դէպքում պէտք է քեզ յարգես։  
 Իֆիզենիա. Գերազոյն հրճուսնք անխառն անարատ  
     Մեր սիրտը միայն կարող է վայելել։  
 Պիլադ. Այդպէս ես դու քեզ պահել տաճարում։  
     Կեանքն ասում է մեզ—մեզ ու այլոց հետ  
     Պակաս խստութեամբ հարկ է որ վարուենք։  
     Դա դու ել դիտես։ Այնպէս է կազմուած  
     Մեր ցեղն հրաշալի, այնպէս բազմազան  
     Նուրբ հանգոյցներով իրար շաղկապուած,  
     Որ մեզնից ոչ ոք մարդկանց նկատմամբ  
     Կամ հէնց ինքն իւր հետ չի կարող երբէք

Մաքուր անշփոթ անկեղծ մնալ միշտ:  
 Զէ՞ որ ինքներիս մենք չենք դատ կտրող:  
 Մարդու առաջին պարտքն է մերձաւոր  
 Միշտ առաջ գնալ ու աչքը պահել  
 իւր ճանապարհին: Շատ քիչ է լինում,  
 Որ իր արածին մարդն արդարացի  
 Գին գնել ցանկայ, իսկ ինչ որ գեռ նոր  
 Ուզում է անել, երբէք չգիտէ բանի տեղ հաշուել:  
 Իֆիզենիա. Համարեա արդէն համոզում ես ինձ:  
 Պիլադ. Պէտք է համոզմունք այնտեղ, ուր չկայ  
 Ազատ ընտրութիւն: Զի քեզ ու եղբօրդ  
 Ու մի ընկերոջ վրկելու միայն  
 Մի ճանապարհ կայ.  
 Հարցն այն է, արդեօք կերթանք այն ուղով  
 Իֆիզենիա. Օ՛, թող որ մի փոքր յապաղեմ կրկին.  
 Զի դու էլ անշուշտ իզուր ու հանգիստ  
 Քեզի բարերար հանդիսացողին  
 Զէիր պատճառի այդպէս անարդար  
 Անիրաւութիւն:  
 Պիլադ. Եթէ ուշանանք, կորուստի դիմենք,  
 Հոգիդ կըյուղուի խոր կշտամբանքով,  
 Կընուաճի քեզ յուսահատութիւն:  
 Դու կորուստների սորված չես երբէք,  
 Այդ է երևում խօսք ու շարժումէդ,  
 Զի մեծ չարիքից վրկուելու համար,  
 Չես ուզում մի սուտ խօսք գոհաբերել:  
 Իֆիզենիա. Օ՛, երանի թէ ես ունենայի  
 Այրական մի սիրու որ երբ մի խիզախ  
 Գործի է դիմում, այլ ամեն ձայնի  
 Խուլ համր է դառնում:  
 Պիլադ. Զուր ես ուշանում: Անհրաժեշտութեան  
 Չեռքը պողպատէ, որ աստուածներին  
 Օրէնք է նոյն իսկ, այդ է պահանջում:  
 Յաւիտենական ճակատագրի  
 Քոյլը մենաւոր իշխում է լոիկ

Ինքնիշխան կերպով:  
 Եւ ինչ որ նա քեզ բաժին է հանում,  
 Կրիր անշշուկ. արա՛, ինչ որ նա  
 Քեզ կըպատուիրի: Մնացածն արդէն  
 Դու ինքը դիտես: Նուտով յետ կը գամ  
 Մեր ազատութեան փրկարար նշանն  
 Աւանդ վերցնելու քո սուրբ ձեռքերէդ:

### ՀԻՆԿԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Իմիգենիա (մենակ).

Պէտք է հետևեմ, ուրիշ ճար չկայ:  
 Վերահաս վտանգի մէջ են իմ մարդիկ:  
 Բայց ինչու արդեօք բախտս սեփական  
 Ինձ ահ է ազդում: Միթէ չեմ կարող  
 Փրկել այն խաղաղ յոյսը հանդարտիկ,  
 Որ այդքան երկար պահել եմ կրծքիս:  
 Միթէ այդ անէծքն յաւետ պիտ իշխի,  
 Միթէ մեր այս ցեղն նոր օրհնութիւնով  
 Զպիտի երբէք աճի, ուռճանայ:  
 Լաւագոյն բարիքն, կեանքի չքնաղ ոյժն  
 Ի չիք են դառնում, հիւծւում վերջապէս,  
 Միթէ անէծքին չկայ լոկ վախճան:  
 Այդպէս, այս վայրում հայրական տնից  
 Զատուած, անջատուած զուր էի յուսում  
 Ես մաքուր ձեռքով ու ամբիծ սրտով  
 Զնջել արատներն իմ հայրենի տան:  
 Սոսկալի ցաւից հրաշալի կերպով  
 Բազուկներիս մէջ հազիւ փրկուեցաւ  
 Եղբայրս իմ անգին, հազիւ է գալիս  
 Երկար աղերսած նաւն այս ափերին,  
 Սիրուն հայրենիք ուրախ տանելու,  
 Բայց ահա նորից երկաթի ձեռքով  
 Անհրաժեշտութիւնն առաջո է հանում  
 Կրկնակի վշտեր,—ինձ վստահացուած,

Յարդուած զիցուհու սրբազան պատկերն  
Փախցնել տանել ու դաւաճանել  
Այնպիսի մարդու, որին իմ կեանքի,  
Իմ բախտի համար շնորհապարտ եմ ողջ:

Օ՛, Ոլիմպիական հզօր աստուածներ.  
Այնտեղ մի հասցնէք, որ բողբոջ բռնի  
Կրծքիս մէջ նախկին հին աստուածների՝  
Մեծ տիտանների զզուանքը դէպ ձեզ,  
Որ հուժկու անգղի սուր ճիրաններով  
Պատում է քնքուշ կուրծքս նազելի:  
Օ՛, Փրկեցէք ինձ ու ազատեցէք  
Իմ հոգուս մէջ ձեր պատկերն երկնային:

Ահա ականջիս հնչում են դարձեալ  
Հին երգի ձայներ, որ այնքան սիրով  
Մոռացել էի. երգը այն բախտի  
Երեք քոյրերի, որոնք երգեցին  
Սարսռալի կերպով, երբ Տանտալն ընկաւ  
Ոսկեայ սեղանից: Ազնիւ հրճուանքով  
Վշտակցում էին. լի էին մաղձով  
Կրծքերը նոցա և երգն՝ ահաւոր:  
Մանուկ օրերիս դայեակս ըստընտու  
Երգում էր այդ երգն ինձ ու տնեցոց.  
Եւ ես դեռ այդ երգն յիշում եմ հիմա.

Խղճուկ մարդիկ, վախեցէք  
Աստուածների զայրոյթից,  
Որոնց ձեռքումն է պահւում  
Իշխանութիւն, զօրութիւն:  
Որին ուղեն կըպատուեն,  
Որին էլ ցած կընետեն:  
Թող նոցանից կրկնակի  
Ահ ու երկիւղ ունենայ,  
Ով առաջուց նրանցից  
Փառք ու պատուի է հասել:  
Աթոռներ են պատրաստուած

Շուրջ ոսկեղին սեղանի Յառաջամ  
Ժայռերի ու ամպի վրայ: Յանուար յաճախափ  
Թէ նոցա մէջ վէճ ծագի,  
Յած են նետում հիւրերին  
Արհամարհուած, անպատուած  
Գիշերային մթան մէջ,  
Ուսնք այնտեղ ընկդմուած  
Խաւարի մէջ անթափանց  
Զուր են տենչում սպասում  
Աստուածների ատեանին:

Սակայն իւանք ոսկեղին  
Մեղանների մօտ նստած  
Տօնի մէջ են մշտապէս:  
Սարերից սար են անցնում,  
Ու անդունդի խորքերից  
Լսում հեռոցն ահարեկ  
Տիտանների շնչարգել՝  
Ինչպէս զոհի մեղմ բուրմունք,  
Ինչպէս թեթև ճերմակ ամպ:

Եւ դարձնում են աստուածներն  
Իրանց օրհնող հայեացքներն  
Մերունդներից զանազան.

Ու թոռան մէջ չեն ուզում  
Նոքա տեսնել առաջուայ  
Իրանց սիրած նախահօր  
Դիմագծերն յար նման:

Այդ էր ահա երգը նոցա,  
Որ գիշերուայ կրծերում  
Լսում էր լուռ Ծերը մեծ  
Ու միտ բերում որդկերանց  
Նաև դժբախտ թոռներին  
Ու թափ տալիս ծեր գլուխ:

Թարգ. գերմ.